# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 ապրիլի 2025 թվականի № 147-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի № 539-Ն որոշման հավելվածի 16-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի մարտի 3-ի № 71-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Ձևավորել ***2025 թվականի ապրիլի 25-ին ժամը՝ 10:30-ին*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնող մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Հայկ Մկրտչյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2) ***Ստեփան Բաղդասարյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

3) ***Կարեն Հունանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

4) ***Վահագն Նազլոյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ,

5) ***Լեյլի Խաչատրյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

6) ***Քրիստինե Հակոբյան*** - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել ***Հայկ Մկրտչյանին***, քարտուղար՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ ***Իրինա Մկրտչյանին***:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի ապրիլի 23**
**ք. Հրազդան**